Հավելված N 7
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023 թվականի մարտի 22-ի N [illegible]-Լ որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ մարզպետի աշխատակազմ), զորահավաքային նախապատրաստության բաժինը (այսուհետ՝ Բաժին) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Տարածքային կառավարման մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Այլընտրանքային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության, վարչապետի և քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) որոշումներով, Գլխավոր քարտուղարի հրամաններով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Բաժնի լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Բաժինը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է ՀՀ վարչապետը:

4. Բաժնի կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է Մարզպետը:

II. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժինն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) կազմակերպում է մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների իրականացումը.

2) իրականացնում է մարզպետի աշխատակազմի գործունեությունը՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման և զորահավաքային պլանների մշակման աշխատանքները և մասնակցում է այդ պլանների իրագործմանը.

3) ցուցաբերում է մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցություն մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումներին, մարզպետի աշխատակազմին ենթակա մարմիններին, զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպություններին ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման և զորահավաքային պլանների մշակման աշխատանքներում և մասնակցում է այդ պլանների իրագործմանը.

4) համագործակցում է հանրապետության զորահավաքային աշխատանքները համակարգող լիազոր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների, ինչպես նաև այլ մարզերի զորահավաքային մարմինների հետ.

5) մասնակցում է ՀՀ Վայոց ձորի մարզի /այսուհետ՝ Մարզ/ զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների հետ համապատասխան պայմանագրերի կնքման և դրանց կատարման նկատմամբ վերահսկման աշխատանքներին.

6) մասնակցնում է զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին,

7) ապահովում է մարզպետի աշխատակազմի մասնակցությունը զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին,

8) իրականացնում է պաշտպանության նպատակով Մարզի վարչական տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումներ, աջակցում է զինված ուժերի զորահավաքային ծավալմանը.

9) մասնակցում է Մարզի վարչական տարածքի օպերատիվ սարքավորմանը և օժանդակում է դրա իրագործմանը.

10) իրականացնում է մարզպետի աշխատակազմի աշխատող պահեստազորայինների ամրագրումը,

11) մասնակցում է պարտադիր զինվորական ծառայության և զորահավաքային զորակոչի ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքներին զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ,

12) կազմակերպում է «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով տարածքային կառավարման մարմինների համար սահմանված այլ միջոցառումներ.

13) Բաժնին վերապահված լիազորությունների շրջանակներում կազմակերպում և համակարգում է Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները.

14) իրականացնում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Բաժնին վերապահված գործառույթներ.

15) իրավական և մասնագիտական հսկողության շրջանակում իրականացնում է հսկողություն Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում, օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան առաջարկություններ և անհրաժեշտ տեղեկատվություն է ներկայացում Մարզպետին.

16) մասնակցում է Մարզի տարածքում ըստ համայնքների հաշվառված քաղաքացիներից մարզի համայնքների աշխարհազորային պայմանական բրիգադների և գումարտակների աշխարհազորայիններով համալրման գործընթացին:

17) իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված Բաժնին վերապահված լիազորությունների շրջանակներում գործառույթներ:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Մարզպետը: Գլխավոր քարտուղարը պատասխանատու է Բաժնի գործունեության կազմակերպման համար:

7. Բաժնի պետը անմիջական հաշվետու է Մարզպետին: Մարզպետը բաժնի պետի անմիջական ղեկավարն է:

8. Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:

9. Բաժնի պետը պատասխանատու է Բաժնի առջև դրված խնդիրների և Բաժնին վերապահված գործառույթների իրականացման համար:

10. Բաժնի պետը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

11. Բաժնի պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: